

# ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են  
խրատարները բառին 2 կոպեկով:

Տ է Լ Է Փ օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Եղիսարէթ Չաքարեան Գէորգեանց իր որդոց հետ, և խաչատուր  
Բաղդասարեան Գէորգեանց յայտնում են, որ ամսին 11-ին, կիրակի, Մոզ-  
նուս, Գէորգեանց եկեղեցում, պատարագից յետոյ տեղի է ունենալու հորեհաստ  
հանդուցեալ:

Ս Տ Ե Փ Ա Ն Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր Ե Ա Ն Գ Է Ո Ր Գ Ե Ա Ն Յ Ի  
Եղիսարէթ: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10-ին: 1—1

### ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Իրաւագիտական օգնութիւն. Կանանց արհեստագիտական կրթութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Գաղափարները շատ ուշ են յաղթանակ տանում. Գաղափարական նախանձը հայերի մէջ. Մատենագրութիւն. Նամակ Մոսկովայից. Նամակ Գանձակից. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Եգիպտոսից. Նամակ Բուխարայից. Նամակ Պարսկաստանից. Հին-Ն. Գ.Մ.ՆԵՐ.— ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Ազգի պահպանը:

### ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Գաղափարական օրէնագրութեան թե-  
ֆօրմները նոր ծրագրերը, ուրիշ բազմաթիւ  
հարցերի լուծում, յարուցել է և մի խնդիր,  
որ մեծ կարեւորութիւն ունի մասնաւոր  
գիւղական ազգայնագիտական շահերի  
տեսակետից: Հարց է յարուցված թոյլ չը  
տալ, որ մասնաւոր անձինք պարագլխէ  
փաստաբանութեամբ, այլ բոլոր փաստա-  
բանները՝ մասնագէտներ լինեն և իրաւա-  
բանական յենդ ունենան:

Յայտնի է, որ ներկայումս ոչ մի գաղափար-  
ական հարց, լինի նա քաղաքացիական  
թէ քրեական, անհնարին է վարել առանց

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### Ա Ջ Գ Ի Պ Ա Հ Ա Պ Ա Ն Ը

(Գաղափարական հերոսներ)

Առանց բարեկամի չէ մեր աշխարհը...  
Վատ, զգուշիւ աշխարհ... ո՞վ չէ ճանաչում  
նրան: Չը կայ սրբութիւն, սէր, չը կայ խաղա-  
ղութիւն, չը կայ խեղճի, զրկուածի անդորրու-  
թիւն. վերացել է եղբայրութիւնը, տօն տակ են  
ընկել խնկելի գաղափարներ...  
Այս չէ մեր ամենի համոզմունքը:  
Եւ գանգատ ու տրտուած է լսում ամեն տեղ,  
անէծք է թափվում խեղճ աշխարհի գլխին: Իսկ  
աշխարհը իր գործն է առաջ տանում. անիծող  
մարդկութիւնը չէնց ինքը չէ իրան հասցնում  
անիծում զրութեան: Մոլորել են անիծել. և  
անէծքն է, որ միմիայնութիւն է տալիս յուզված,  
աչկեղծ սրտին:  
Մինչև անգամ գաղափարական տիրապետ խուլ  
անկիւնը, մինչև անգամ այդ երջանիկ թմրու-  
թիւնն էլ, ճնշված է անէծքների տակ: Չը կայ  
մարդ այդ անկիւնում, որ անկեղծութեամբ, բուռն  
զգացմունքով արտասանած չը լինի. բռնազգի,  
խոր խրվի այսպիսի աշխարհը: Չը կայ այդ-  
պիսի մի մարդ:  
Մեքը չափազանց շատ է թմանդամ. ապա-  
կանութիւնը չափազանց սանձարձակ է տիրում...  
Եղել են մարդիկ, որոնք հակացել են աշխար-  
հի վատութիւնը, որոնք հեռու են կանգնել ընդ-  
հանուր ազգայնութիւնից և իրանց մեծ սրտերի  
մարմաքը, վրդովմունքը դուրս են թափել... անդի,  
յորդանաս արտասանել մէջ, սիրտ կարտառող,  
աղիորդող ողբերի և հառաչանքների մէջ... Ողբ ու  
արտասանող ընդհանրութեան, ժողովուրդների հա-  
մար... Յիշեցէք Երեմիային, որ մի ժամանակ  
ողբում էր Իսրայէլի թշուառ ցեղը... Իսկ Խորե-

փաստաբանների և իրաւաբանների օգնու-  
թեան, ի նկատի ունենալով, որ, առհասարակ,  
մեր գաղափարութիւնը շատ բարդ  
պայմանների է ենթարկված:  
Մայրաքաղաքներում և գաղափարական նշա-  
նաւոր քաղաքներում ազգայնագիտութիւնը  
հնարաւորութիւն ունի անօրնական և ան-  
պաշտպան վիճակի մէջ չը մնալ, քանի որ  
կրթուեալ հաւատարմատարների մի մեծ  
թիւ միշտ պատրաստ է առաջարկելու նրան  
իր ծառայութիւնները. բայց աննշան և  
փոքր քաղաքներում, խուլ անկիւններում,  
զրկուած ժողովուրդը զրկված է իրաւա-  
գիտական օգնութիւնից և պաշտպանու-  
թիւնից, ուստի և հարկադրված է դիմել  
մասնաւոր փաստաբաններին:

Սյր է պատճառը, որ ոչ միայն խուլ  
անկիւններում, աննշան տեղերում, այլ նոյն  
խիլ շատ գաղափարական քաղաքներում ստեղ-  
ծվել է մասնաւոր փաստաբանների, «արևա-  
կասների» և «միջանների» տիպը. և այդ  
անկող իրաւագէտներին է դիմում անձա-  
բացած ժողովուրդը ու օգնութիւն խնդրում:  
Եւ որովհետև մասնաւոր փաստաբանները  
իրանց մասուր և բարոյական ստոր գար-  
դանան պատճառով միայն մի գլխաւոր  
նպատակի են ձգտում,— կախել, ուստի նը-

նացին, որ ողբում էր գլուխ ու հոգի կորցրած  
հայ ազգը...

Իսկ մեր ժամանակի մեղքերը... Երկարած են  
նրանք: Եւ խեղճվում է մարդկութիւնը նրանց  
կատարած աչկեղծի մէջ: Բայց պակասել են ող-  
բադիւնները:

Ո՛չ: Ողբան գոյութիւն ունի մեզքը, կայ և նրա  
վրա արտասուած կաթնեղջեր:

Ահա նա, մի այդպիսի սրտացաւը: Մեր առջին  
է նա, չարժու, խոստուն:

Գաղափարական խուլ անկիւնը ոտքի է կանգնել,  
ձայնում է զարմանքից ու հիացմունքից: Պատա-  
հել է մի անցը, որ տեղափոխ դարադուրս է կաղ-  
մում:

Գարնան հրաշալի օրերն էին: Գաղափարական  
խուլ անկիւնը եկաւ նրա տարագիր որդիներից  
մէկը, մի գնդապետ: Սա այնքան շատ էր մնա-  
ցել հեռու օտարութեան մէջ, որ իր մայրենի  
լեզուն այժմ շատ դժուար էր հասկանում: Այդ  
բարձրաստիակ տղամարդը, որ իր վե՛ն տեսնու-  
ի իր փայլուն համազգեստով և կօշիկների չիւղըն-  
կան խթաններով մի ապշեցնող, աճաւոր երևույթ  
էր դուռը իր հայրենակիցների համար, ուղեց  
զարմանքից բուրբոլի բարացնել մեծին ու փոք-  
րին և փառաւոր կերպով տօնեց իր սիրելի, մին  
ու ճար աղջկայ ծնունդի օրը:

Երջան կար: Մտաբանակ տեղացիներից չորս-  
հինգ մարդ ձարվեցան, բացի զբանցից գնդապե-  
տը իր հետ ինչ էր բերել մի հայ օֆիցերի ըն-  
տանիքը, որի մէջ կային երկու բարակ ու նիւար  
երիտասարդներ և մի գեղանաւ, բայց լաւ աչք  
խաղաղանող օրիորդ: Հեռուստ տեղից բերել տօնին  
զինուորական մուգիկան, որը կէսօրից յետոյ  
սկսեց որոտալ, տարօրինակ, չը լսված ձայներ  
տարածել լուռ չրջակայքում: Իսկ երեկոյեան...  
Վը գանուէր գտնէ մի հաս հարազատ տեղացի,  
որ իր կեանքում կարծիք անգամ ունեցած լինէր  
թէ տեղային օրինաւոր դուստրների մէջ կը լի-

րանք շատ անգամ մեծ վնասներ են հասց-  
նում ժողովուրդին, հնարելով անվերջանալի  
վէճեր, և դատաւարական ցանցի մէջ զցե-  
լով ազէտ ժողովուրդին:

Սյր հանգամանքը ի նկատի ունենալով  
հարց է ծագել միանգամայն արգելել մաս-  
նաւոր անձանց ոչ միայն պաշտօնական, այլ  
և անպաշտօնական կերպով փաստաբանու-  
թեամբ պարագլխը, այն է չը թոյլատրել,  
որ նրանք ժողովուրդի համար նոյն խիլ խըն-  
դրագիրներ և գանգաւներ դրեն:

Տարակից չը կայ, որ գովելի է այդ ցան-  
կութիւնը— թոյլ չը տալ հարստահարելի,  
կեղեքել խեղճ, անօրնական ժողովուրդը:  
Բայց վերացնելով մի չարիք, պետք է այն-  
պէս անել, որ նրա տեղ մի ուրիշ չարիք չը  
հաստատուի: Անկասկած, մեծ բարիք կը լի-  
նէր, եթէ ժողովուրդը իրաւագիտական օգ-  
նութիւն ստանար հմուտ, պատրաստ և  
մասնագէտ իրաւագէտներից,—բայց ժողո-  
վուրդը որտեղ գտնի դրանց: Երբուեալ  
հաւատարմատարները, ապրում են գլխա-  
ւոր քաղաքներում, ժողովուրդից շատ հեռու  
և եթէ չենք սխալվում, զէթ կովկասում  
այսօր ոչ մի մասնագէտ փաստաբան սիրտ  
չէ արել թոյնը քաղաք և գնալ բնակու-  
թիւն հաստատել գտնէ զիւղական կենդու-  
նական տեղերում: Այդպիսով զիւղացին  
զուրկ է որ և է հնարաւորութիւնից օգտ-  
վել մասնագէտ իրաւագիտ խորհուրդին  
ընդ, և անձաբացած, կամայ ակամայ, նա  
պետք է դիմի հարստահարող միջաններին  
և «արևակասներին»:

Շատ համակրելի է, որ օրէնագրութիւ-  
նը ձգտում է ազատել ժողովուրդը այդ  
չարիքից. սակայն նոյն օրէնագրութիւնը  
պէտք է հօգ տանի, որ ժողովուրդը զուրկ  
չը մնայ իրաւագիտական պաշտպանութիւ-

նի այդ մուգիկայի խառնուրդնոր դուռնե-  
րով պարողներ... Բայց այդպիսիներն էլ գանգա-  
ցան. և պարտ է էին համարակներ պէ... Փաստը  
ճանր փաստ էր, որ ջուր էր մաղել խաղաղ  
աստուածասէր տեղացի հանդիսականներին վրա:  
Այդած են զէմբերը, արտայայտում են ամօթ ու  
գառն անբաւականութիւն. իսկ գնդապետը քաղցր  
ծիծաղում է, իմանում է որ ինքը մի նոր հրաշք  
է ցոյց տալիս բարեպաշտ հայ քրիստոնեաներին:

Հրաշքը մասնաւոր սուկալի է գնդապետի մի  
մօտիկ ազգականի համար: Մասնաւոր-Միացա-  
կանն է դա, որ նստած է անհեկի անկիւնում,  
զուների մօտ. գլուխը կալի է զցել, սև սաթի  
տերթորեան յուսահատ չրխկացնում է և եր-  
բմն յօժքի տակից կամայ-կամայ նայում է  
պարողներին: Ժամուկէսից աւելի է, որ նա  
տանջվում է, բայց դիմանում է: Զգում է նա որ  
այդ տանը չէ կարող տեղաւորել, որ վշերի  
վրա է նստած: Տէր Ատուած, ինչեր են տես-  
նում մարդու աչքերը...

Մէկ անգամ էլ նայեց Մասնաւոր-Միացա-  
կանն մէջ տեղը խմբված են հինգ երիտա-  
սարդներ, որանց մէջ կանգնած է մի աղջիկ: Ե-  
րիտասարդներից մէկը հանեց սպիտակ թաշկի-  
նակը, ինչ-որ բան սաաց և զէպի բարձր չալը-  
տեց թաշկինակը. երիտասարդները վեր ցատկե-  
ցին թաշկինակը շուտ բռնեցու համար. միայն  
մէկը կարողացաւ լսել: Աղջիկը իսկոյն իր թիւր  
տուեց թաշկինակ բռնողին, սկսեց պարել նրա  
հետ: Ինչ պար... Միմանց կայած... միմանց  
խոտած... մէկի կուռը միւսի ուսին... մէկի  
կուռը միւսի մէջքով դրած... Հերթը հասաւ  
միւս օրիորդներին և նրանք էլ այդ խիլ կերպով  
պարեցին:

—Սա Պողոս-բէկի աղջիկը չէ, զայրացած  
հարցրեց Մասնաւոր և ճանաչելով որ նա է,  
տեղից վեր կացաւ: Այդ ժամանակ Պողոս-բէկի  
աղջկայ տեղ առաջ գնաց խօջա-Աղջիկաւ աղ-  
ջիկը:

նից, մասնագէտ, բարեխիղճ փաստաբան-  
ներից: Գաղափարական թեֆօրմների յանձ-  
նաժողովը պետք է մտածի այդ մասին:

### ԿԱՆԱՆՅ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Կանանց արհեստագիտական կրթութեան  
խնդիրը դառնում է հերթական խնդիր: Մեր  
գաղափարներում անգամ մտածում են այն  
միջոցների մասին, որոնցով կարելի է նպաստ-  
անել այդ գործին: Բազուի հայուհիները  
կամենում են աջողցնել կար ու ձև և ձև  
զարդի կամ արհեստանոցի հաստատու-  
թիւնը. Ախալցխայում արգէն փորձեր արին  
գորգագործութիւն սովորեցնելու. վերին-  
Աղուխում երկու տարի առաջ, զարդի  
յօրեկանի առիթով, միտք ծագեց կանանց  
արհեստագործութեան կրթութեան մի ծը-  
րագիր մշակել և գտնելցին այդ գործի հա-  
մար նուիրատուներ. Ալեքսանդրապոլում  
էլ սկսում են խօսել այդ խնդրի մասին, և  
այլն:

Կարող ենք աւելացնել, որ թիֆլիսի Հա-  
յուհեաց ընկերութիւնը, որ առաջին փոր-  
ձերից մէկն է արել այդ ասպարէզում, ցան-  
կանում է լայնացնել իր գործունէութիւնը:  
Ընկերութեան անգամուհիներից մի քանիսը  
մտադիր են հարց յարուցանել, որ ընկե-  
րութիւնը իր զարդում լայնացնի գործնա-  
կան պարագլուխների ծաւալը, մտցնի նոր  
արհեստներ և առհասարակ ամենաուսն-  
գուն կերպով նուիր իրան կանանց արհես-  
տագիտական կրթութեան գործին, համա-  
րելով դրան առ այժմ ընկերութեան նպա-  
տակայամար պարագլուխներից մէկը:

Խնդիրը ժամանակակից է և կենսական,  
ուստի ցանկալի է, որ նա լայն կերպով  
մշակվի և շուտով ստանայ գործնական ձև:

Ել չը դիմացաւ Մասնաւոր-Միացա-  
կանը: Մի ակնթարթում նա դուրս վազեց և համարեա ան-  
զիտակցաբար ընկաւ խոհանոցը: Այդտեղ ծեր,  
հաստավիղ Հայրապետ ամաններ էր լուսնում:  
Մասնաւոր նրան սիրում էր մասնաւոր այն  
պատճառով, որ նա լաւ, այրինք թուռն է հո-  
տաւէտ քիմիստ էր պահում: Եւ բունց նրա  
ծիծաղում է, իմանում է որ ինքը մի նոր հրաշք  
է ցոյց տալիս բարեպաշտ հայ քրիստոնեաներին:  
Հրաշքը մասնաւոր սուկալի է գնդապետի մի  
մօտիկ ազգականի համար: Մասնաւոր-Միացա-  
կանն է դա, որ նստած է անհեկի անկիւնում,  
զուների մօտ. գլուխը կալի է զցել, սև սաթի  
տերթորեան յուսահատ չրխկացնում է և եր-  
բմն յօժքի տակից կամայ-կամայ նայում է  
պարողներին: Ժամուկէսից աւելի է, որ նա  
տանջվում է, բայց դիմանում է: Զգում է նա որ  
այդ տանը չէ կարող տեղաւորել, որ վշերի  
վրա է նստած: Տէր Ատուած, ինչեր են տես-  
նում մարդու աչքերը...

—Այ մարդիկ... այսպիսի բան կը լինի... Ին-  
չու եք քարացել...

Հայրապետը խօրին վիշտ արտայայտեց իր  
զրույթ ծանր թախաճարեղով:

—Այս աշխարհը չի քանդվի, Հայրապետ,  
հը... ասան, չի քանդվի... Ախր... այսքանի  
մէջ... մի հատ, մի հատ հայ քրիստոնեայ չը  
կայ...

Մասնաւոր գլուխը սկսեց զողալ. խօսել այլ  
ևս չը կարողացաւ նա և նրա աչքերում արտա-  
սուծեց երևաց: Այդ տեսաւ ծեր Հայրապետը, որ  
նոյնպէս սկսեց մրմնջալ, դուրս թափել իր սրտի  
ցաւը. և ապա շտապեց խոհանոցը, յայտնելով  
որ իր գործը մտում է:

—Երկնային թագաւոր, մեղաւոր ենք... հառաչեց  
Մասնաւոր մի անպիսի յուսահատ ձայնով, որ  
պարողներն էլ լսեցին: Տեսարանը անխորտիս էր  
մտում. պարերը չարժանակում էին յամառու-  
թեամբ: Եւ Մասնաւոր այլ ևս մեղք համարեց  
մնալ այդպիսի տեղը, շտապով գնաց իր տու-  
նը...

Բայց ինչ տուն կարող էր տեղաւորել նրան  
այդ գառն բօսկին: Նա կը ձարվէր չորս պա-  
տերի մէջ, այդ ցածրիկ և զեղին առաստաղի  
տակ: Եւ դուրս գնաց նա, նստեց իր տան զը-  
ների մօտ:

Այդպիսի ժամերում մեր Մասնաւոր վրա ծան-  
րանում էր մի սրբազան ոգևորութիւն, որ հար-





ասելով՝ կարող եմ ասել, թաղը աստուծոյ, Գէ-  
վոս—երկը որդի: Այնուհետև նոյն վրացի իշ-  
խանը նկարագրելով թիֆլիսի հին ժամանակը և  
նորի հետ համեմատելով՝ խօսում է միայն և մի-  
միայն Առաքել և իր, Արուսի և իր, Միկի և իր, Մի-  
Առաքելը սուսն է շինել, «մանրամասն Արու-  
սի» ինչը կապիտալիստ է դարձել, «գինեվաճառ»  
Միկի ինչը սեպական կառքով է ման գալիս և  
այլն և այլն:

Եւ ցաւալին այն է, որ այս ներկայացումների  
կազմակերպողները զրկելով բոլորն էլ ինտելիգենտ  
մարդիկ են, որոնց հետ եթէ խօսէք, տար տար  
կը վիճեն հայրի և վրացիներին համարաչափու-  
թեան անհրաժեշտութեան մասին:

Հայոց բեմը արդէն ինքը հարուածում է հայ  
վաշխառուներին, Չիմիդիաններին, և վրացիները  
անհամեմատ աւելի օգուտ կունենային, եթէ Գէվոս,  
Գիքո ու կարապետ վաշխառուների տեղ, Բէսո,  
Իվանիկա ու Էստատէ չարչիներին բեմ դուրս  
բերէին:

Կոս. Գիւլնազարեանց

ՆԱՄԱԿ ԱՍՈՒՅՈՒՅՈՒՅՅ

Փետրվարի 6-ին

Անցեալ ամսի՝ յունվարի 29-ին, գիշերվայ  
10 ժամին, անյայտ չարագործներ դաշտին հա-  
րուածներով սպանեցին մի համեստ ժամագործի՝  
Գաւիթ Վանցեանին, և խելով նրանից ժամա-  
ցոյցները արկղիկը, անհետացան: Խեղճը թողել  
է 9 փոքրահասակ երեխաներին, ծերունի որդւն և  
կնոջը՝ որը և արքայու Մի քանի օր դրանից ա-  
ռաջ Բորակճեանից բնակարանի նախասենեակից  
անյայտանում են երեք նոր վերարկուներ: Եր-  
կու օր յետոյ վերարկուները յանձնվում են ի-  
րանց տէրերին, նախապէս տան և հինգ բուրձի  
փրկանք ստանալով: Նոյն օրն իրիկնապահին մի  
քանի սրիկաներ յարձակվում են փողոցի մէջ,  
փուռնից տասպակած հնդկահաւեր տանող ծա-  
ւայի վրա, յարկչատուում հնդկահաւերն և նոյն-  
տեղը բաժան-բաժան անում միմեանց մէջ և  
վայելում քրքջալով: Այդ բոլորը չոր ու ցամաք  
դէպքեր են, որոնք արձանագրւում են, մի փոքր  
ժամանակ յուզում մտերևը և կրկին մոռացու-  
թեան տրվում: Բայց թէ ինչ միջոցներ պէտք է  
ձեռք առնել, որ սպառազուտ չը կրկնվեն այդ-  
պիսի փողոցային դէպքեր՝ դրա վրա ոչ ոք չը  
պահանջում և չէ դարձնում:

Մեր քաղաքում սուսնիկ պէս բանում են այն  
սրիկայարանները, որոնց, մեծարելու հա-  
մար, «կաֆէ-թէստօրան» անունն են տալիս: Այդ  
փխցած որջերի մեծ մասը գործում է ոչ պաշ-  
տօնապէս, այսինքն առանց պատենտի քաղաքի  
խուլ անկենդանութեան զետեղված, որոնց դուռն ճա-  
նապարհը գիտեն միայն որոշ չրջանի յաճա-  
խորդները: Այդտեղ խմբվում են՝ նորտ, վէճ և  
թղթախաղ անում, կուլում, հաշտվում և ի վեր-  
ջոյ գաղտնի սենեակի սեղանի շուրջ խմբվում  
և ազգայն արչաւանքների համար ծրագրիներ  
պատրաստում: Բազմանում է և ողեսների  
թիւը, որոնք, թէպէտ համաճայն օրէջքի՝ գիշեր-  
վայ ժամը 10-ին պէտք է փակվեն, սակայն  
փակվում են միայն արտաքին փականքները,  
իսկ ներքին սենեակներում շարունակվում են քեյ-  
ֆեր և նոր գողութիւնների պատրաստութիւննե-  
րը: Ուրիշ առիթներ չը կան կարծելու, թէ ինչ  
պիսի անանկայատկութեան շնորհի մի քանի  
միկիտաններ յանկարծ հարստանում են: Այլձեռք  
գիտէ նրանց գաղտնիքը, որ կարողանում են  
չուսյլ կեանք վարել, այլ և տնտեսել և հարս-  
տանալ: Գուք ինձ հարցնելու էք անչաչա,—մի-  
թէ ոստիկանութիւնը չէ հսկում և տեղեկու-  
թիւններ չունի այդ որջերի մասին—Ոստիկա-  
նապետը մի բար անձնաւորութիւն է՝ նա հա-  
ւատացել է իր ստորագրեալներին քաղաքացինե-  
րի կեանքի և կազմի սպահովութիւնը:

Գեղ, դարման, հարցնում է ընթերցողը:—Մեր  
կարծիքով այդ բոլորի առաջը կարելի է առնել,  
եթէ գործարարին հետեւել միջոցները:—Փակել  
չբնտարանս անուանված որջերը, որտեղ դրամա-  
կան խաղերով և գողութեան ծրագրիներ պատ-  
րաստելով են զբաղվում: Խստիկ պահանջել օղե-  
աների կառավարիչներին, արձարանատներին և  
նոյնանման հիմնարկութիւններից, որ նրանք հա-  
մաճայն օրէջքի որոշուած ժամերին բոլորովին  
փակեն իրանց խանութները, այնուհետև ոչ ոքին  
չընդունեն. իսկ եթէ նկատվի, որ արտաքին

փականքը գողեւուց յետոյ, ներքը հիւրեր են  
ընդունված՝ ենթարկել դրամական տուգանքի  
կամ բոլորովին զրկել իրաւունքից այդպիսի վա-  
ճառատուն պահելու: Հսկողութիւնը յանձնել գի-  
շերապահների խմբերին, որոնք զեղծութեան  
համար պատասխանատու լինեն օրէջքի առաջ:  
Հաստատել թաղական գիշերապահներ, որոնք  
գիշերները չըջեն իրանց թաղի աղատ և խուլ  
փողոցներում: Ոստիկանութեան ստորին պաշ-  
տօնեաներին, որոնց թիւը վերջերս մասնա-  
պատկել է և որոնք քաղաքից են ուժիկ ստանում,  
տուգանքների ենթարկել կամ ծառայութիւնից  
խապառ հրաժարեցնել, եթէ նրանցից մինը ա-  
ռանց օրինական պատճառի բացակայի իրան  
յանձնված տեղից:

ՆՆՈՒՅՈՒՅՅ

«Մշակի» այս օրվայ համարը բաղկացած է  
թերթի ու կէսից:

Ուրախսալի է, որ վրաց հասարակութիւնը ջանք  
է գործ զնում օգնելու Քոլիպայիսի նախնադում  
վերջին հեղեղներից մեղաւած կարօտ ընտանիք-  
ներին: Մենք յոյս ունենք որ այդ նախնադի մէջ  
ապրող հարուստ հայերը ևս չեն զլանայ օգնե-  
լու իրանց հարեան՝ մեղաւած, նիւթական օգնու-  
թեան կարօտ վրացիներին:

«Շաւիղի» մէջ կարգում ենք՝ «Երկու շաբթի»,  
նոյեմբերի 28-ի երեկոյան, Թէհրանի Գարվազա  
Վազվիլի հայ աւետարանականների եկեղեցում  
տեղի ունեցաւ մի գրական երեկոյով: Երեկոյով  
ծրագրի մեծ մասը ճառախօսութեան էր: Ինչ որ  
աչքի ընկաւ և շատ համակրելի երեկոյով էր,—դա  
այն էր, որ հայ աւետարանականների հրաւերը  
ընդունելով՝ փոխանորդ հայր Սահակ վարդապետ  
Այվատեանը բարձրագույն բողոքականների եկեղե-  
ցու բեմը և այնպիսի խօսուցի մի ողորդած ճառ:  
Հայր սուրբի այդ աղաւատական քայլը քաջա-  
լերութեան արժանի է: Մենք գիտենք, շատ յի-  
մար սազեր գրգռվելու են, որ լուսաւորչական  
վարդապետը մտաւ բողոքականների եկեղեցին,  
քարոզ խօսեց և մինչև իսկ գովեց միասօնար-  
ների լուսաւորութեան գործի համար արած ջան-  
քերը, բայց յոյս ունենք որ վարդապետը այդպի-  
սի մի աղատ քայլը անելուց յետոյ՝ գիտէ նաև  
արհամարհել այդպիսի փոսած դատողութիւններ:

Մեզ գրում են Էլմիմանինց, որ շուտով Ալէք-  
սանդրօպօլի համար պէտք է նշանակվի մի նոր  
յաջորդ՝ Բագրատ վարդապետ Թաւաղաբեանի  
փոխարէն:

Մեզ հաղորդում են, որ Աստրախանի քաղա-  
քացի Մահմետ-Յարութիւն Յարութիւնեան, որ  
մի ժամանակ ուսում է առել Ներսիսեան դպրո-  
ցում, կազմել է մի կտակ, որի գործութեամբ  
իր մահից յետոյ՝ նրա կարածքի մի մասը  
պէտք է պատկանի Ներսիսեան դպրոցին:

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի հաղորդակցու-  
թեան ճանապարհների միջնորդութեամբ է ժ ա-  
նա ց բ ե ց երկաթուղային երթևեկութեան  
սակագինը: Մի տարվայ փորձը ցոյց տուեց,  
որ այդ կարգադրութեան շնորհով երթևեկութիւ-  
նը այնքան մեծացաւ, որ երկաթուղիներին եկա-  
մուտը աւելացաւ 8 միլիոն բուրձով: Կարծում  
ենք, որ ժամանակ է կանայցիներու և նամակնե-  
րի մարկաների գնելը: Այդ փոփոխութիւնը,  
անկասկած, կունենայ նոյն լաւ հետեանքը, ինչ  
որ ունեցաւ երկաթուղային վարչութեան ա-  
րած փորձը:

Լսում ենք, որ թիֆլիսի հայոց Հրատարակչա-  
կան ընկերութեան տարեկան ժողովը պէտք է  
կայանայ ներկայ փետրվար ամսի վերջին, կամ  
մարտի սկզբին:

Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցի երգե-  
ցիկ խումբը շատ անգամ փողով հրաւիրվում է  
որ և է անձի յուզարկաւորութեան հանդէպին  
Գպրոցի հոգաբարձութիւնը, աչքի առաջ ունե-  
նալով աշակերտների առողջութեան խնդիրը  
դպրոցի շահը՝ իր վերջին նիստում որոշեց  
այսուհետև դպրոցի երգեցիկ խումբը ուղարկել  
միայն եկեղեցի և թոյլ չը տալ եկեղեցուց դուրս  
մասնակցել յուզարկաւորութեան:

Մեզ հաղորդում են, որ հայոց դերասանական  
խմբի անդամներից՝ մի քանիսը, ընկերակցու-  
թեամբ նորաւարտ դերասան՝ Ֆէրօսովի աչա-  
կներտ Յակոբ Օհանեանի, այս օրերս գնալու է  
Բաթում երկու կամ երեք ներկայացում ապու-  
խմբի մէջ են՝ Վրայր, Սեպեանեան և ուրիշ-  
ները:

Սասանք Բագուի «Սթոր» տպարանի հրատա-  
րակած՝ 1896 թ.ի փոքր «Օրացոյցը»: Բացի  
լուսն օրացոյցային տեղեկութիւններից, նա պա-  
րունակում է իր մէջ զանազան վիճակագրական  
տեղեկութիւններ: «Օրացոյցին» կցած է Պետրոս  
Գուրեանի, Ներսէս Պատրարքի, Յակոբ Պար-  
նեանի համառօտ կենսագրութիւնները և պատ-  
կենները: Տիպը մաքուր է, գինը մատչելի—10  
կ.: Չարմանալի է միայն, թէ ինչու «Օրացոյցը»  
չլայ է տեսնում այսքան ուշ, փետրվար ամսու-  
մ:

ՄԱՍՍԻՅ մեզ գրում են, «Փետրվարի 2-ին,  
սիրողների մասնակցութեամբ, հասարակաց ա-  
կումբի դահլիճում, տեղի ունեցաւ մի ներկա-  
յացում՝ յօգուտ մեր դպրոցի ջրաւոր աշակերտու-  
հիների: Ներկայացրին երկու պիէսաներ՝ «Վսալ  
հայի», և «Էս և էլ քի մօղիքը»: Ներկայացու-  
մը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց  
հանդիսականների վրա: Աչքի էին ընկնում իրանց  
կենդանի խաղով օր. Օ. Տէր-Աստուածատրեանը  
և տիկին Ա. Տէր-Ստեփանեանը, նոյնպէս և պ.պ.  
Վ. Նիկիւզօբեանը, Գ. Տէր-Ստեփանեանը և Բ. Տէր-  
Աստուածատրեանը: Ինչպէս տեղեկացանք, դուռ  
արդիւնքը եղել է 65 բուրձի:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ գրում են Կ. Պօլսից, «Վարդան հիւանկ  
ինքն ալ ստիպուած է ջարդերու տեղեկագիրներ  
պատրաստել:»

Մեզ գրում են Կ. Պօլսից, յունվարի 20-ից,  
«Էջրուով առաջնորդ Ղևոնդ եղիպտոս Նիշ-  
մանեան բերուեցաւ Պօլս: Վաղը կամ միւս օր  
Երուսաղէմ պիտի ուղարկվի:»

Կ. Պօլսից մեզ գրում են յունվարի 23-ից, որ  
Վանի կուսակալի փոխանորդ նշանակվեց մի  
հայ, Ստեփան Մէլիքեան, իբրև թէ իրագործելու  
համար ընթացիկ ծրագրի այն կէտը, որտեղ  
ասված է, որ նախնադպեաների օգնականները  
պէտք է քրիստոնեայ լինեն: Մեր թղթակիցը  
աւելացնում է, որ Մէլիքեան երբեմն քարտու-  
ղար էր Ամէջիլի թիւրքաց զեսպանութեան, և  
մօտիկ բարեկամ է Նաղմ-փաշայի:

Թիւրքաց աղբիւրներից հաղորդում են Լճնո-  
ւնի լրագիրներին, որ Չէլիճում զինված հայե-  
րի թիւը հասնում է 25 հազարի:

Մեզ գրում են Վ. անից, յունվարի 10-ից, որ  
այդ քաղաքի մէջ երեացել է տի ֆ հիւանդու-  
թիւն, որը սպաւնում է մեծ կոտորած՝ քաղցած  
և անպատասխան ժողովրդին:

ՆԱՄԱԿ ԵՂՈՒՅՈՒՅՅ

Գ. Կ. Ի. Բ., յունվարի 11/23-ին

Ալէքսանդրիայում նորերս մի խառն մասնա-  
խումբ կազմվեց հայ կարօտեալներուն օժանդա-  
կելու համար և անմիջապէս հանդանակութիւն  
սկսեց: Հանդանակութեան գործը փոխով առաջ  
կը տարուի յարգելի մասնախմբի անիոնց աչ-  
խատութեամբ և մինչև ամսիս 10/22-ին հանդա-  
նակված դրամի գումարը կը հասնէր 925 ան-  
գլիական ոսկիի: Հանդանակութիւնը տակաւին,  
կը շարունակուի. անցեալ քաղթու թղթատարով  
է հանդանակիչ մասնախմբի նախագահ Գուսիօ  
500 ոսկի փոխարկեց Կ. Պօլս միանգամայն  
խնդրելով, որ առ այժմ այդ գումարով փոխով  
օգնութիւն հասցուի թիւրքաց Հայաստանի կա-  
րօտեալներուն ամենապատիւ Խմբիւրեան պատ-  
րիարքի գիտութեամբ:

Գովիլի է Նուբարեան ընտանիքի բռնած ըն-  
թացը այս մարդասիրական գործի վերաբերու-

թեամբ: Առանց հաշուի առնելու այն մեծագու-  
մար նուէրները, զոր ըրին բարձրապատիւ Նու-  
բար-փաշայ և իր ազնուախայ տիկինը Հայաս-  
տանի կարօտեալների համար իրենց անցեալ ա-  
մառ Եւրոպայ գնալով առնեւ, առանց հաշուի  
առնելու այն 500 ոսկիի գումարը, զոր տիկին  
Նուբար-փաշայն Եւրոպայէն ուղարկեց Ամեն. Խը-  
մբիւրեանին յօգուտ հայ կարօտեալներու չը հաշ-  
ւելով այն 300 ոսկիի գումարը, զոր Նուբար-  
փաշայն Եւրոպայէն Եգիպտոս դարձած ժամանակ,  
ի Գահիրէ բացուած հանդանակութեանց մաս-  
նակցեց: Եւ այդ հանդանակութիւն բացուած  
էին 1) տեղայն հայոց առաջնորդարանի կողմանէ  
սոսկ հայոց չըբանի մէջ. 2) Արաբիերի ազ-  
գայինը մասնաւոր հանդանակութիւն բացին ի-  
րենց ծննդավայրի բազմաթիւ կարօտեալներու  
օգտին. 3) Կեսարիայի ազգայինը մասնաւոր  
հանդանակութիւն մը ըրին իրենց ծննդավայրի  
կարօտեալներու համար, այս երեք հանդանակու-  
թեանց զատ-զատ մասնակցելով՝ Նուբար-փաշայն  
նուիրեց վերագրել 300 ոսկին, երեք հանդա-  
նակութեանց համար: Առանց հաշուի առնելու  
այդ արդէն եղած նուէրները, Ալէքսանդրիայի  
մէջ բացուած հանդանակութեան Նուբար-փաշայն  
և իր ամուսինը մասնակցեցին 160 ոսկիով. իսկ  
Պոլոս-փաշայն և իր ամուսինը մասնակցեցին  
նոյն հանդանակութեան 80 ոսկի նուիրելով:

Այդ նուիրում գումարներէ զատ աւելի  
խրախուսեցին Ալէքսանդրիայի հանդանակութեան  
մասնախմբին ուղղուած այն նամակները, որը  
Նուբար-փաշայն և իր ամուսինը կցած էին ի-  
րենց նուէրների հետ հանդանակիչ մասնախմբի  
անուան, նրանց յայտնելով իրենց երախտագի-  
տական շնորհակալութիւնը, որ յանձն առած են  
այդպիսի մի վեճ և մարդասիրական գործի հա-  
մար աշխատել և հաղաբարձ թշուառների ազ-  
քատութիւնը մեղմացնել Եգիպտոսի պետական  
այդ մեծ մարդու ըրածները յիբաի շատ մեծ  
խրախոյս և բարօրակամ վարձատրութիւն է մաս-  
նախմբի համար, և միանգամայն անմոռանալի  
պատիւ կը բերի այդ մեծանուն ընտանիքին:

\*\*\*

ՆԱՄԱԿ ԲՈՒԿԱՐՈՒՅՅ

Բուշուբ, յունվարի 15-ին

Կերպով մը անցազիր մը ձեռք բերելով ի Կ.  
Պօլս և դուրս գալով Թիւրքիայի սահմաննե-  
րէն, անցալ ի Պուրկազ, ուր այցելեցի ազգային  
եկեղեցին ու վարժարանը: Պուրկազի եկեղեցին  
ու վարժարանը մեծ չարաբանքների զեռ նոր  
ազատած, նիւթապէս և բարոյապէս զեռ նոր  
սկսած են հանդարտ շունչ քաշել և իրենց նպա-  
տակին ծառայել, շնորհի մի քանի ոչ—տեղացի  
հայ աւետարանականներու: Վարժարանի վիճակը  
յուսակց է, որպէս և հոգաբարձուաց համբաւի  
ողին:

Մշեցուց նախապետական արախչին ցոյց կու-  
տայ պանդուխտներու գոյութիւնը այդտեղ: Պան-  
դուխտ հայոց մեծամասնութիւնը հոս ևս կ'ըզ-  
բաղի անչաճ բեւեակութեամբ: Կը մասնեք  
կառք, չորեկառք ու կը հասնենք Եսնայովի,  
ուր ցիր ու ցան կը պայտնելու չարքին հաղիւ-  
կերկին երկու երեք ճաշակաւոր չէքեր: Հոս ևս  
ամեն դասակարգէ պանդուխտներ կը գտնուին,  
տեղական հայերու վիճակը նուազ յարգի է, ըսն  
Պուրկազինը:

Շօրեկառքին մէջ կը սպասինք անհամբեր Ֆի-  
լիպօպօլի երենայուն. սուրիւը դայդ ալ կուստէ,  
կայարանն ենք: Համարողները ցոյց կուտան ան-  
ցազրին, կը նշանակուին մի առ մի, կը բեն փո-  
լեցիպիլ, թէ ուր պիտի իջնանին: Ֆիլիպէն իր  
քաղաքային կանօնաւոր և մաքուր պարտեզներով  
զերպազանց է ըսն Պօլսը, քաղաքային կարգ կա-  
նօն նոյնպէս, աւետարակն կենտրոն է իր չըջա-  
կայից և բաւուի, հոս կան բաւական թւով մեծ  
հայ վաճառատներ, Աստարճեան, Մէլիքեան,  
Մանուկեան, Գալաֆեան, Ալաւեան և այլն: Ար-  
հեստաւոր դասակարգին մէջ ևս առաջին տեղը  
կը բռնեն հայերը, առաջնազոր, երկաթագործ  
հայեր են միայն, որ մեծ նշանակութիւն ունին:  
Մանաւանդ նոցա եւս մասնիկով իրենց մակա-  
նուները փառաւոր գրբերով վաճառատանց վեր-  
գրույմը մեծ պատիւ կը բերէ: Պուրկազին մէջ  
ցանցաւ կերկին անոնք, որք պատիւ կը կարծեն  
անուննին կեղծել եւս մասնական ուրացու-  
թեամբ, կամ այլ ծիծաղելի կերպերով:

Պաշտոնը թեթևամտեցնում է ընդհանուր կրթության և հասարակական կյանքի մեջ: Չբարձր ծագում ստացել են սեփական նորարարական վարժարանի կառուցման փառաբանում: Եթե տեղացիք այն չեն պահել մեր դեմ, պիտի ըսենք թե իրենք են յանցաբար Ազգիանց և ազգայն կրթական և միջարկը երկու քարաշեն շենքեր, ոչ լիովին յարմար ներկայ պահանջման, դուրսեցրել և տեղացիք ջանք մը հարկեր ոսկիներով կանգնած են եկեղեցու երկու կողմն և կը ծառային իբր վարժարան: Ուսուցիչը ցմահ են վարձված: Գրանք, որչափ և ինչ մեթոդի սիրահար, ջանք չեն խնայել իրենց նպատակին ծառայելով ազգին օգտակար լինել, թէև փառաբանել և կարելի էր առել ծառայություն սպասել իրենցմէ: Վարժարան մէջ կուսակցութեան սպասուկարներն, իբր տիրող լեզու: Ազգիանց բաժինն ալ գրեթէ ընդու կը տարբերի միտեն: Մենք կը յուսանք և կը ցանկանք առել լուրջ, ինչպիսի կասկածալիցութեամբ Ֆիլիպպի հայ մանկուհոյն:

Մոռցանք ըսել, թէ քաղաքիս առաջնակարգ պանդոկի և դեղատոմսի տներն ևս հայեր են: Անցինք այժմ թաթար-բաղարիքը, որ փոքրիկ եկեղեցիով և վարժարանով մը ու ալ մը ժողովուրդը երեք կուսակցութեան բաժանելով: Կամողջացնէ ազգային գոյութիւնը, բայց առատակամութեամբ մէջ հայերը գիտեն դարձեալ մեծ դիրք և շահ գրառել: Թէ Ֆիլիպպի և թէ Բաղարիքի ազգայնական դրացուր, աննշան բացառութեամբ, ընդհանրապէս թող է:

Վստայ քաղաքը, որ Պոլսոյ մօտիկ և առելի բանուկ է ճամբորդներով, լի է թէ ազգասէրներով և թէ լրաններով: Իսկ Ռուսչոք—ազգասէրներու, մասնաճիւղերու, փախտականներու և խարբերաներու տեղն է...

Ազգային վարժարանի ղեկն ջոջերը յանձնած են երկրասարգութեան, որ իրենք հանդիստ լինեն: Վարժարանը կը հեծէ արտուր վիճակի մէջ նիւթակալէս...

Ռուսչոքի երկրասարգութիւնն ունի կողիկ և փոքրիկ մի ընթերցարան, ուր բազմաթիւ լրագրերն և սակաւթիւ գրեւորք, ինչպէս և նարտի ու թղթի միջոցաւ երկրասարգութիւնը կանցնէ իր պարսպ ժամերը: Ընթերցարանի մէջ կը լինեն օգտակար վիճաբանութիւններ և տեսութիւններ: Հին արդեւած է ողիւնց ըմպելիք, աղմուկ կամ համատեսութեան դեմ ու է արարք: ձեռք այսպէս ընթերցարան մը ունէր և Ֆիլիպպի, որի մասին մոռցանք խօսել, սա տարբերութեամբ միայն, որ առելի շքեղ, ճոխ և հարուստ է, քան Ռուսչոքի: Այս վերջինն ալ դեռ նոր է, հետաքրքիր կրնայ յառաջադիմել:

Ռուսչոքի մէջ փառաբան, Սեթեան, Մանուկեան, Գոյաձեան, Գալաձեան, Խաչաձեան և ուրիշները կը փայլեն առևտրական գործերով: Նոքա լաւ ըմբռնած են Պուլկարիոյ առևտրական ողիւն, անոնցմէ ոմանք զանազան քաղաքներու մէջ ունեն իրենց ձիւղերը: Թեւրբայ լծից նոր ազատուած Պուլկարիոյ մէջ ծայրին միտքը կը տիրեն կարգ, կանոն, ապահովութիւն և հասարակութիւն:

**ՆԱՄԱԿ ՊԱՐՍՊԱՍՏԱՆԻՅ**  
Սալմասա, յունվարի 21-ին

Ամբողջ Արարատականում, բացի նրա կենտրոն թաւրիցից, տիրում է մի ցաւալի և վնասակար սով,—օրինաւոր ուսուցիչներ սովը: Սկսեք թաւրիցին մերձակայ Գարաբաղից, ինչնք Արքաբիլ, Մարաղա, վերջապէս դէպի արեւմուտք՝ Թիւրքիայի սահմանակից Ռւմի, Սալմասա և խոյ զաւառները, և եթէ օրոնեւ լինենք, հազիւ կարող ենք գտնել մի երկու կամ երեք անձինք, որոնք թիչ թէ շատ համապատասխան լինեն իրանց պատասխանատու ուսուցչական կոչմանը, շատ տեղեւում բոլորովին չը կան, իսկ եղածներն էլ ուսուցիչ կոչելու մահացու մեղք է...

Արարատականի բազմաձայ գաւառը Սալմասան է, օրովհետեւ այդտեղ մեծամասնութեան կողմից հայերն են առաջին տեղը բռնում: Տասը, տասերեւոյց (մի մասը զուտ հայ, մի մասն էլ խառն օտար տարրերի հետ) հայ գիւղերից մի բանիսը միայն ուսուցիչներ ունեն, մնացած տեղերում չը կան, եղածներն մեծ մասն էլ խալիֆա-տիրացուներ են:

Վարժուհիներն մասին խօսք չի կարող լինել: շատ տեղերից այլիկներ ղեկում են Սալմասա և Ռւմիի միտնարներն և կաթիլիկներն ուսուցիչները:

Ամբողջ Սալմասաի հայ գիւղերից Գալապարը և Հաֆիթուսը կարող են մի քիչ պարծենալ իրանց ուսուցիչներով, բայց բաւական ժամանակ է, որ Գալապարի միակ պիտանի ուսուցիչը հեռացել է և մինչև այժմ էլ տեղը պարսպ է մը: նուաճ խոյի թէ իր մէջ և թէ չըջակներում ոչ մի ուսուցիչ չը կայ, նոյնպէս Ռւմիում իր չըջականերով:

Անցեալ տարի խօսք կար Սալմասաում մի կենտրոնական ուսուցիչարան բանալու, բայց այդ նպատակն էլ բոլորովին չը մարմնացաւ:

Միտնարները ունեն խոյում մի փոքրիկ ուսուցիչարան, Սալմասաում երկուսը, Հաֆիթուսում և Հին-քաղաքում մի մի հատ: Հաֆիթուսի նը երկուսն է, նոյնպէս Ռւմիում երկուսն ուսուցիչարան ունեն: Կաթիլիկներն էլ ունեն Սալմասաում, Սալա և խոյովա գիւղերում, վերջինում երկուսն, ունեն և Ռւմիում նոյնպէս երկուսն:

Մի խօսքով շատ անխաբանելի և անմեղքագրութեան մէջ է Արարատականի կրթութեան, ուսման գործը: Միայն զարգացած սերունդը կարող է պատուել, ցրվել այս թանձր մտայն մթնոլորտը, որը պատու է Արարատականը:

**ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

**ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՑ**

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 7 փետրվարի: Ի նկատի ունենալով, որ լուրեր են տարածվել, թէ Երթարու թիւն կայ մտցնել ծխախոտի միտնալուծութիւն կամ կտորակ ծխախոտի վաճառումը կտորակութեան ձեռքով, հարկերի ղեկավարումէնստը, ֆինանսների մինիստրի հրամանով յայտնում է, որ այդ լուրերը անհիմն են:

Բժշկական դեղատրամէտը յայտնում է, «Ի նկատի ունենալով, որ վճարի և կիւրի նախնազներում խօլեքան բուլղովին դաղարի է, այդ նախնազները հրատարակուած են ազատ խօլեքայից»:

ՊԱՐԻՉ, 7 փետրվարի: Բուրժուա, ընդունելով պայտի ծայրահեղ ձախկողմեան կուսակցութեան պատգամաւորներին՝ յայտնեց, որ չէ ցանկանում հիւզարթի օր ենթարկվել հարցալուծութեան, այլ նախամեծար է համարում սպասել սենատի վճիռին:

ՎԻԷՆՆԱ, 7 փետրվարի: Այստեղ հասաւ Սօֆիայից կոմս Գոլոնիչէ: Կուսուցով:

Կ. Պոլսոյ հաղորդում են, որ սրբազան թագադրութեան ներկայ գտնվելու համար՝ Մոսկվա կուղարկվի թիւրքաց արտակարգ դեսպանութիւն 3 հոգուց բաղկացած, պարագլուխ ունենալով մի մարդը:

ԼՕՆԻՊՆ, 7 փետրվարի: Ասում են, որ սրբազան թագադրութեան հանդէսի ժամանակ թագուած ներկայացուցիչը կը լինի կոնստանտինոպոլսէ:

Արտաքին գործերի մինիստրութեան յայտարարութեան համաձայն, Սէու է ուղարկված մի ծովային զորախումբ՝ միայն անգլիական դեսպանատունը պաշտպանելու համար, օրովհետեւ կօրէյի գործերը սպառնալից դիրք են ընդունում: Համայնքների ժողովում: Գահական ճառի պատասխանի քննութիւնը: Ռուսագէրբուրգ առաջարկում է մտցնել ուղիւծի մէջ, թէ ժողովը ցաւակցութիւն է յայտնում Չիտալի գրաման մասին: Իրա դէմ Հնդկական գործերի մինիստրը առարկում է, թէ Չիտալի գրամում ժողովի նախորդ նիստում հաստատութիւն է գտել ձայների անգլիկ մեծամասնութեամբ և թէ նա անսպասելի կերպով նպատակաւ հետանցներ է ունեցել: Այդ քալի մէջ Ռուսաստանի համար ոչ մի վերակարգական բան չը կայ: Ռուսագէրբուրգը առաջարկը մերժելը 193 ձայներով ընդէմ 79-ի:

ԵՕԿՉԱՄՍ, 7 փետրվարի: Եւրոպական պաշտօնական տեղեկութիւններին նայելով, ուսուց պահակախումբը բաղկացած է 5 օֆիցերներից և 107 զինուորից: Թագաւորը սպաստան գտաւ ուսուցչական կոչումով մէջ պահակախումբի գալու երկուրդ օրը:

ՇԱՆԿԱՅ, 7 փետրվարի: Ֆրանսիական օրինակով կարող ենք հիշատակել կուսակցութեան իր ծառայութիւնը 100 միլիոն քօլար փոխառութիւնը իրագործելու համար, այն պայմաններով որոնց հիման վրա կատարված է ուսուցիչական փոխառութիւնը:

ԼՕՆԻՊՆ, 7 փետրվարի: Համայնքների ժողովում: Չէմբելէն հաղորդում է, որ նոր ղեկուցումների հիման վրա կրկնվեցին մօտ եղած կուսումն Զէմսոնի խմբից 21 հոգի սպասվել և 46 հոգի վերակարգվել են, ինչ վերաբերում է բօլշևիկների կորուստին, այդ մասին պաշտօնական տեղեկութիւններ չը կան: Կիւրքոն հաղորդեց, որ յուն վարի 29-ին 100 ուսուցիչներ արի են

իջել Չէմբելու և Գիւնգիլ են Սէու: Երկուրդ օրը կօրէյի թագաւոր փախել է ուսուցչական համաձայն, բրիտանական դեսպանատան պաշտպանութեան համար ուղարկված է անգլիական նաւատիրների մի պահակախումբ: Կիւրքոն պատճառներ չունի ենթադրելու թէ ուսուցչական գրամում կը լինի:

ՆԻՎՆԻՆՕՎԳՕՐՕՎ, 8 փետրվարի: Վճարված է ցուցահանդէսի մօտ մի մեծ մասնաւոր թաւրոն կատարաններ: Թագաւորը փայտաշեն կը լինի:

ԲԷՂԳՐՈՎ, 8 փետրվարի: Թագաւորը հնորհեց Կ. Պոլսի ուսուցչական նշխարովին Սպիտակ արժէ 1 ստոխճանի շքանշանը:

ԼՕՆԻՊՆ, 8 փետրվարի: Կ. Պոլսից հաղորդում են, որ Բ. Գուսը ստացել է բուրբ պետութիւնների համաձայնութիւնը՝ Ֆեբրինարի պրինցին Բուլղարիայի իշխան ճանաչելու մասին, բացի Անգլիայից:

ԼՕՆԻՊՆ, 8 փետրվարի: Անգլիական երկու հոչակատար փաստաբաններ պէտք է պաշտպանեն Չէմսոնի դատարանում, ամենը հաւաստացած են որ երկուսնապէս կարողանան նրան Հաղորդում են, որ կրկնվեց նախագահը յետանգիլ իր Լօնդոն գալը անորոշ ժամանակով և հաղիւ թէ նա գայ:

Կ. ՊՈԼԻՍ, 8 փետրվարի: Այժմ ստացվել է և Անգլիայի համաձայնութիւնը՝ պրինց Ֆեբրինարին ճանաչելու մասին:

ԼԻՍՍԱԲՕՆ, 8 փետրվարի: Նկարիչների կուսուցում, պարահանդէսի ժամանակ հրդեհ սկսվեց: Շատ տղամարդիկ, կանայք և երեխաներ իրանց վայր ցցեցին փողոց: Գտնված են շատ դիակներ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ԲՕՐՍԱ

Փետրվարի 6-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	94	20
Բեռլինի վրա 100 մարկ . . .	45	85
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37	25
Ոսկի . . .	7	50
Մաքսային կուպոններ . . .	149	>
Բորսային դիսկոնտ . . .	7 1/2	>
4 1/2 օ պետական բնտա . . . . .	98	>
Կիւրքին 5 1/2 անալիս փոխառութ. . .	288	>
. . . . . երկուրդ . . .	262	>
5 1/2 օ գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	218	>
5 1/2 օ պետական երկաթուղ. բնտա . . .	100	>
4 1/2 օ ներքին փոխառութեան . . . . .	97	7/8
4 1/2 օ գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	100	> 25
Աղն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	100	>
4 1/2 օ վկայագր. գրու. հող. բանկի . . .	100	>
Փոխ. կրեդիտ. ընկեր. մուտալ. . . . .	>	>
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101 1/2	>
ընկերութեան օրվաջայիներ . . . . .	101 5/8	>
Մոսկվայի քաղաք. օրվաջայիներ . . .	100	>
Օգէսայի . . . . .	93 3/4	>
Թիֆլիսի . . . . .	100	> 50
Թիֆլիսի կալ. բանկի 6 1/2 . . . . .	99	>
5 1/2 օ . . . . .	100	> 50
Քուրմայի . . . . .	99	>
5 1/2 օ . . . . .	99	>

**ԻՍԻԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՆՈՒՄ Է**

ԱՍԵՐԻԿԱ. Բօ ո ս ո ն. Արմէն. Ներգրութիւն կրեցը յայտնել, թէ ինչ հասցեով ուղարկենք ձեզ «Մշակ»:

ՆՈՐԲՈՒԹԱՐԱ. Գ. Արամազեանց. Ալիշանի Հին հաւառը հայոց գիրքը կուղարկի ձեզ կենդանական քրտնաճարակները:

ՊԱՐԻՉ. Ս. Երկայնեան. Բարեհաճեցեք յետ ստանալ ձեր ուղարկած տուները: Զարմանալի է, որ այդպիսի խնդրքով դիմում էք խմբագրութեան, որ ոչ միջոց և ոչ էլ ժամանակ ունի այդպիսի խնդրներ կատարելու:

ՆՈՐՆԱՍԻՉՆԻԱՆ. Տ. Կրասնոսելկան. «Մշակ» ուղարկվեց ձեզ: Լրագրական գործակալութեան միջոցով բաժանորդագին չենք ստացել և ոչ էլ ձեր հասցին: Բարեհաճեցեք պարզել:

ԹԷՂԱՆ. «Շաւիղ» խմբագրութեան. Ձեր յայտարարութիւնը չը ստացանք և այդ պատճառով մի քանի անգամ տպագրվեց հին յայտարարութիւնը: Ձը գիտե՞ք, որքան ճիշդ է նա «Շաւիղ» նոյններին համարները այսօր միայն ստացանք:

ԲԱԳՈՒ. Ա. Սաղիսանց. Հասցեն իրենեւ համար պէտք է ուղարկեք 4 հատ 7 կօպէկանոց մարկա:

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ներկայ փետրվարի 5-ից բացվում է

**ԿԱՐ ՈՒ ԶԵԻԻ**

Զբաւոյ աղջիկների համար

(Կրտսէնշտերնական փողոց, № 7)

Սօֆիա Խահակեան ԴԷՄԵՏԻՎԱ

(№ 15) 3—5

**ОТДАЕТСЯ МАГАЗИНЪ**  
ВЪ домѣ Кукуджанова, на Пушкинской улицѣ, противъ православной семинаріи.

(Կ. շ.) 1—5

**ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ**

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ  
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)  
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:  
**ԱՌԱԽՕՏՆԵՐԸ՝**  
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ—11—12 ժ. վերաբու- ժութեան, սիրելի և վնասակար հիւանդու- թիւնների:  
Գ. Գ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարալային հիւանդութիւններ:  
Կինքիչ ԴՈՒՆԱՅԷԼԱ-ԲՈՒՊԵՆՎՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հիւանդութիւններ:  
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. սկանջի, կու- կորդի, զերի և կրծքի հիւանդութիւն, հորբաբ- թի և ուրբաթ:  
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆԻ—12—1 ժ. ներքին, երե- խայց և նեարալային հիւանդութիւն, հիւանդութիւն և շարժութիւն:  
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ—1—1 1/2 ժ. ներքին և երե- խայց հիւանդութիւն:  
**ԵՐԵՎԱՆԵՐԸ՝**  
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքը, հինգը, և շա- բաթ:  
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆԻ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:  
Ա. Գ. ԳՈՐԿՅՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և ռեւմատիզմի հիւանդութիւններ և մորթի հիւանդութիւններ:  
Ա. Գ. ԳՈՐԿՅՕ քրիստական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէղի, խիսի, ա- րեան, կաթի և այլն:  
Վճար 50 կ. համարորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:  
Հիւանդանոցի վերանաւազ- ըժճակաւ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Մամուլի տակից դուրս եկաւ

**ՄԱՐԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՒՊԵՏ**

(չարտականութիւն և վերջ. հատոր Գ.)

**ԳՈՐԾՔԻ ԱՌԱՔԵԼՈՑ**

ՍԱՀԱԿ ՔՀ. ՍԱՀԱԿԵԱՆՅ

(№ 16) 2—5

**ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ Մ. Գ. ՀԵՁՈՒԲԵԱՆԻ**

(Գօրծիմակի պրօսպեկտ, տուն Անանիովի, նոր թատրոնի դէմ)  
ՀԻՒՆԴԱՆԻԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ առա- լօտեան 9 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան: Բժշկում է առանձինը, պլումբ է անում՝ և զնում է արհեստական առանձինը:  
(№ 133) 22—30

**ՏԻԿԻՆ Շ. ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ**

որ աւարտել է Պետերբուրգում կար ու ձեռի արհեստը և ունի զիւ պլումբ

**ՏԱԼԻՍ Է ԴԱՄԵՐ**

մատչելի գնով Գլուբիկի և Ֆրանսիական մեթոդով, թէ՛ իր տանը և թէ՛ տներում:  
Յանկացողները թող դիմեն էժան ա- ղին գրադարան, Վելիամիտովայա փո- ղոց:  
(№ 12) 4—6

**ՀԱՅՈՒՆԵՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ**

XI ԴԱՍԸՐԹԱՅԻՐ բացվում է սոյն փետրվա- րի 15-ին: Յանկացողները կարող են գրվել փե- տրվարի 15-ին, Գանովայա փողոցում № 25. 2—2 (Կ. շ.) (№ 15)

**ՔՍԻԼՍԻ ԿԱԿԵՏԱՅԻՆ ԿՕՐՊՈՒՍԻ ՊԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ**

Գ Լ Ի Ն Ս Կ Ի  
Վճարը չափաւոր: Ազդուութիւնը անկասկածելի: Հասցեն—Մապերնայա փողոց, № 26, նոր թատ- րոնի յետը:  
(№ 15) 2—3

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն — Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

(Սերգեյեվսկայա փողոց, տուն Ալիևանեանի, № 16)

ԲԱՅ Է { Առաջատան ժամ 9—2, երեկոցան 5—8 ժամ
Կիրակի և տոն օրերը առաջատան 9—12 ժամ

ՏՈՒՆ ՏԱՆՆԵՆԻ համար տրվում են ամսագրեր, լրագրեր և գրքեր:

ՎՃԱՐԸ տարեկան—4 ռ., ամսական—40 կոպեկ, մուտքը—2 կոպեկ:

Կովկասագիտություն և արևելագիտություն համար կայ առանձին բաժին:

Ստացվում են հայերեն 1) Մշակ, 2) Արձագանք, 3) Նոր-Գար, 4) Տարազ, 5) Աղբյուր, 6) Մուրճ, 7) Թատրոն, 8) Հորիզոն, 9) Լուսնայ, 10) Արարատ, 11) Արաբա, 12) Հանգչա Ամսօրեայ, 13) Բազմապեղ, 14) Շուրի, 15) Ծաղիկ, 16) Հայրենիք:

Ռուսերեն 1) Кавказъ, 2) Новое Обозрѣніе, 3) Тифл. Листокъ, 4) Кавк. Сельск. Хозяйство, 5) Новости, 6) Русскія Вѣдомости, 7) Новое Время, 8) Московскія Вѣдомости, 9) Биржевыя Вѣдомости, 10) Каспій, 11) Недѣля, 12) Нива, 13) Всемирн. Иллюстрація, 14) Петерб. Жизнь, 15) Лучъ, 16) Иверія (գրագրեր):

Ռուսաց ամսագրեր 1) Русская Мысль, 2) Русское Богатство, 3) Миръ Божій, 4) Сѣверный Вѣстникъ, 5) Вѣстникъ Европы, 6) Книжки Недѣли, 7) Вѣстникъ, Иностранной Литературы, 8) Вопросы Философіи и Психологіи 9) Русскій Архивъ, 10) Новое Слово, 11) Новости Печати, 12) Воспитаніе и Обученіе. (№ 17) 1—4

ՍԱԼՄԱՍԻ ՀԱՖԻԺՎԱՆ զեղի ԳՐԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ շնորհակալություններ
յայտնում է որ ստացել է 116 կտոր գրքեր և գրքայինք ուսանող Յով. Տ. Նիկողոսյանեանից, 2 կտոր—Տ. Մ. Խատիսեանից, 10 կտոր Սողոմոն Հաարաթեանից և 1 կտոր պ. Վասիկից:

Գրադարանը ունի այժմ 512 տեսակ գրքեր, շատերը մեկից աւելի օրինակներով, այնպես որ գրքերի թիւը 800-ի կը հասնի: 1895 թ. մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31 կարգացվել է 470 գիրք: Ստացվում են "Մշակ", "Արձագանք", "Հայրենիք", "Մուրճ", "Արաբա" և այլ պարբերական հրատարակություններ: Լրագրերից օգտված են շարունակաբար 50-ից աւելի անձ: 1894—95 տարեշրջանին ընկերությունը ունեցել է 1478 դրան մուտք և 523 դրան ծախս, այժմ ունի 1,500 դրան փող: Անդամների թիւն է Սարմատում 32, որոնք վճարում են տարեկան 5-ական դրան, Ռուսաստանի պանդուխտ անդամներն ալ միշտ օգնած են վճարելով տարեկան 2 ռուբլի:

Գրադարանը մասնաւոր շէնք չունի, ուսումնասիրելի մի սրահում է, որ հինգշաբթի և շաբաթ զեղերները բաց կը լինի, ուր կը հաւաքուին զեղի երկրասարգիները և պատանիները կարգաւոր և դասեր աւնելու: Մտադրութիւն կայ այս ամբողջ մասնաւոր յարմար շէնք կառուցանել գրադարան—ընթերցարանի համար:

(№ 17) 1—2 ԳՐԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎՃԱՐՉՈՒԹԻՒՆԸ

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏՅՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ պատրաստած

ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ

որ արդէն անցեալ տարիներից յայտնի է կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով, և տուած առատ բերքով, "ԵՎՈՆՕՍԻԻԿԵՍ" Ֆիլիմայից:

Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շիրամապահուսթեան կայարանում քննելուց յետոյ:

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱՌՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, Եղբ. ՄՆԱՅԱԿԱՆ ԵՆԱՆՅՆԵՐԻՆ, Իսկ ՆՈՒԻԻՒ Ազա Մուսայ Մահմեդովին:

Այս հասցեով Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАКУ. (№ 138) (Կ. շ.) 22—24

"ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

- 1) ԵՎԵԼԻՆԱ, Գրիգոր Արժրուհու . . . . . 50 կոպ
2) ԹԻՒՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ, Գ. Արժրուհու . . . . . 20 "
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԻ, Խ. Մալու մեանի . . . . . 50 "
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Գալանթարի . . . . . 20 "
0տարաքաղաքացիները կարող են վճարել փողի տեղ ուղարկել պատասխին մարկաներով: (№ 59) 9—10

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ղ Ջ Կ Ե Ր Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԳՐԱՄԱԳՆՈՒԹԻՒՆ Է 23,000,000 ՐՈՒԲԼԻ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԽՈՍՔԻ ԹՂԺԵՐՔ ԿԱՏՎՈՒՄ ԵՆ ԱԿՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ:

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, "ՐՕՍՍԻԱ" ընկերությունը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինը) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՐՈՒԲԼԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ՉԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը "Րօսսիա" ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամից յետոյ 52 ՐՈՒԲԼԻ:

Սոյնանսան ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած առբերքը (պրեմիաները), եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաօրինակ ժամանակից առաջ:

1895 թ-ի յունվարի 1-ին "ՐՕՍՍԻԱ" ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 ՐՈՒԲԼԻ զրամազրկով:

Տղայ ԵՐԵՒԱՆԵՐԻ համար ևս կարելի է ապահովացնել զբաժանաւոր և նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամազրկը կը ստացվի իբրև թոշակ (պէնսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաօրինակ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է:

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգեյեվսկայա փ. տ. № 6. (Երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայրութեան բոլոր քաղաքներում: (№ 71) (Շ.) 16—52

ՆՈՒՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵՆՈՒԹԵԱՆ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՑՍՐՈՒՀԻ ՄԱՐԻԱ ՖԵՕԴՕՐՈՎԱՅԻ
Հովանաւորութեան ներքոյ գտնվող շրջրում խեղդվելուց աղաատղ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՑ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻՆ ԱՎԱԿԱՆ ԳԱՆՏՆՈՒՄ, պատիւ ունի խնդրել ընկերութեան Թիֆլիսի
շրջանի պ. պ. անդամներից շնորհ բերել, կիրակի, փետրվարի 18-ին, ցերեկվայ ժամը
12-ին, շրջանին ընդհանուր ժողովին, որ կայանալու է Բեմակենսայա Ռուբրայայի շինու-
թեան մէջ, Բարձրակի և Բազալայայ փողոցների անկիւնում, տուն թամամչեանի, № 16,
խելու և հաստատելու 1895 թ-ի հաշիւը և 1896 թ-ի նախահաշիւը: 3—3

Բ Ե Ռ Տ Է Տ ԵՒ Ը Ն Կ

ՊԱՍՏՅՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՕԺՕԺԻ ՍԵՐՄԸ
Բաղադրի սպիտակ բոժոժից, Սարգիսիայի և Ֆրանսիական զեղին բոժոժից:
Առևարական տունը, որ գտնվիւն ունի 1868 թ-ից՝ պատիւ ունի յայտնելու չեքանապահան-
քին և ցանկացողներին, որ պայմանի և գնի մասին պէտք է դիմել ԲԱՌՈՒՄ Եղբ. ՄՆԱՅԱԿԱՆ ԵՆԱՆՅՆ
ն երբին հետևեալ հասցեով:
БАТУМЪ, Бр. Мнацакянцъ. (№ 1) (Շ.) 6—8

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի
յՅ1-ն Գեկտեմբերի 1895

Table with 6 columns: Description, Թիֆլիսում, Բարու և Բաժու- մի բաժիններում, Ընդամենը, Գ Ա Ր Տ Ք, Թիֆլիսում, Բարու և Բաժու- մի բաժիններում, Ընդամենը. Rows 1-18 with various financial data.